



ԳԱՆԱՏԱՐԱՅՈՑ ԹԵՄ DIOCÈSE ARMÉNIEN DU CANADA

ԿԱՆՏԵԳՆ

ՍՔ. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ ԱՈՒՋՆՈՐԴԱՆԻՍ
ՄԱՅՐ ԵԿԵՂԵՏԻՈՅ ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԹԵՐԹԻԿ



GANTEGH BULLETIN DU DIMANCHE DE LA CATHÉDRALE
ARMÉNIENNE ST. GRÉGOIRE L'ILLUMINEUR DE MONTREAL

ՄԱՅՐ ՏԱՃԱՐ

ԿԻՐԱԿԻ 31 Մայիս 2020

165

DIMANCHE, 31 Mai 2020



ՀՈԳԵԳԱԼՈՒՄՏ

615 Stuart Avenue, Outremont Quebec, Canada H2V 3H2
Website: www.saintgregory.ca / E.mail: saintgregorychurch@gmail.com
Facebook: Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal

ՀՈԳԵԳԱԼՈՒՍ
PENTECÔTE

Աստուածաշունչի Ընթերցումներ

ԳՈՐԾՔ ԱՌԱՔԵԼՈՑ

2.1-21

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ

ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆՈՒ

14.25-31

Les lectures de la Bible d'aujourd'hui :

1 JEAN 5.13-21

JEAN 12.12-23

Պատարագիչ՝

Հոգևոր Հովի

ԱՐԺ. Տ. ԴԱԻԻԹ ՔԶՆՅ. ՄԱՐԳԱՐԵԱՆ

Célébrant: Prêtre Paroissial

RÉV. PÈRE DAVID MARGARYAN

Առաւօտեան Ժամերգութիւն Ժամը-

Office Matines à

9:30-ին

9h30

Ս. Պատարագ- ուղիղ սփռում Ժամը-

La Sainte Messe – En direct à

10:30-ին

10h30

Հոգեհանգիստ - ուղիղ սփռում Ժամը-

Office de Requieme – En direct à

12:30-ին

12h30

Organist : Vahram Sargsyan

Cœur : Emma et Zara Sargsyan

ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐ

LES LECTURES
DE DIMANCHE



THE SUNDAY
READINGS

ԳՈՐԾՔ ԱՌԱՔԵԼՈՑ

2.1-21

Երբ Պէնտէկոստէի տօնը հասաւ, ամէնքն ալ միաբան մէկտեղ էին: Յանկարծակի երկնքէն ձայն մը եղաւ սաստկաշունչ հովի մը ձայնին պէս եւ բոլոր տունը լեցուց՝ ուր նստեր էին Եւ բաժնուած լեզուներ երեւցան իրենց՝ որպէս թէ կրակէ՛ ու ամէն մէկուն վրայ նստան: Եւ ամէնքն ալ Սուրբ Հոգիով լեցուեցան ու սկսան ուրիշ լեզուներով խօսիլ, ինչպէս Հոգին իրենց խօսիլ կու տար: Երուսաղէմի մէջ բնակող Հրեաներ կային՝ աստուածավախ մարդիկ՝ երկնքի տակ եղած բոլոր ազգերէն ժողովուած, Երբ այս ձայնը եղաւ, բազմութիւնը մէկտեղ եկաւ ու խռովեցաւ, վասն զի կը լսէին որ անոնք իրենց ամէն մէկուն լեզուովը կը խօսէին: Ամէնքն ալ կը սքանչանային ու կը զարմանային եւ իրարու կ'ըսէին. «Չէ՞ որ ահա ասոնք ամէնքն ալ որ կը խօսին, Գալիլիացի են. Ուրեմն ի՞նչպէս կը լսենք մենք մեր ամէն մէկ լեզուովը՝ որուն մէջ ծնած ենք, Պարթեւներ եւ Մարեր ու Եղամացիներ եւ անոնք որ կը բնակին Միջագետքի մէջ եւ Հրեաստանի ու Կապադովկիայի մէջ, Պոնտոսի ու Ասիայի մէջ, Փռիւզիայի եւ Պամփիլիայի մէջ, Եգիպտոսի մէջ եւ Կիւրենէի մօտ Լիբէացիներու կողմերուն մէջ, նաեւ Հռովմայեցի պանդուխտներ, Թէ՛ Հրեաներ եւ թէ՛ նորահաւատներ, Կրետացիներ եւ Սրաբացիներ, կը լսենք որ մեր լեզուներով կը պատմեն Աստուծոյ մեծամեծ բաներու մասին»: Կը սքանչանային ամէնքն ալ ու տարակուսած իրարու կ'ըսէին. «Ի՞նչ պիտի ըլլայ այս»: Ունանք ալ ծաղր ընելով՝ կ'ըսէին. «Անոնք նոր գինիով լեցուեր են»:

Բայց Պետրոս ելաւ տասներմէկին հետ մէկտեղ ձայնը վերցուց ու խօսեցաւ անոնց. «Ո՛վ Հրեայ մարդիկ եւ դուք ամէնքդ որ Երուսաղէմ կը բնակիք, այս ձեզի յայտնի ըլլայ ու ականջ դրէք իմ խօսքերուս: Քանզի ասոնք ո՛չ թէ գինովցած են, ինչպէս դուք կը կարծէք, վասն զի դէռ օրուան երրորդ ժամն է. Հապա ասիկա այն է որ Յովի մարգարէին միջոցով ըսուեցաւ. 'Եւ պիտի ըլլայ որ վերջին օրերը, կ'ըսէ Աստուած, իմ Հոգիէս ամէն մարմնի վրայ պիտի թափեմ ու ձեր տղաքը եւ ձեր աղջիկները պիտի մարգարէանան ու ձեր երիտասարդները

տեսիլքներ պիտի տեսնեն եւ ձեր ծերերը երազներ պիտի տեսնեն Եւ իմ ծառաներուս ու իմ աղախիններուս վրայ ալ այն օրերը իմ Հոգիէս պիտի թափեմ եւ պիտի մարգարէանան: Վերը երկինքը հրաշքներ պիտի ցուցնեմ ու վարը երկիրը՝ նշաններ, արիւն ու կրակ եւ ծուխի մառախուղ: Արեւը խաւարի պիտի դառնայ եւ լուսինը՝ արիւնի, դեռ Տէրոջը մեծ ու երեւելի օրը չեկած: Եւ պիտի ըլլայ որ ամէն ո՛վ որ Տէրոջը անունը կանչէ՝ պիտի փրկուի՝:

ԱԻԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆՈՒ

14.25-31

Այս բաները ձեզի խօսեցայ, քանի որ ձեր քովն եմ, Բայց Միսիթարիչը՝ Սուրբ Հոգին՝ որ Հայրս իմ անունովս պիտի դրկէ, անիկա ձեզի բոլորը պիտի սորվեցնէ եւ ինչ որ ձեզի ըսի՝ մտքերնիդ պիտի բերէ: Խաղաղութիւն կը թողում ձեզի, ի մ խաղաղութիւնս կու տամ ձեզի, ո՛չ թէ ինչպէս աշխարհս կու տայ՝ եւ ձեզի կու տամ: Սրտերնիդ չխռովի ու չվախնայ: Լսեցիք որ եւ ըսի ձեզի թէ՛ ‘Կ’երթամ ու ձեզի կու գամ’. եթէ զիս սիրէիք՝ պիտի ուրախանայիք, որ* եւ Հօրը քով կ’երթամ, վասն զի իմ Հայրս ինձմէ մեծ է: Եւ հիմա դեռ չեղած ըսի ձեզի, որպէս զի երբ ըլլայ՝ հաւատաք: Ա՛լ ձեզի հետ շատ պիտի չխօսիմ, վասն զի այս աշխարհին իշխանը կու գայ եւ իմ վրաս բան մը չունի. Միայն թէ աշխարհ գիտնայ որ եւ Հայրը կը սիրեմ ու ինչպէս Հայրը ինձի պատուիրեց, այնպէս կ’ընեմ: Ելէ՛ք, ասկէ երթանք»:

ACTS 2.1-21

Et comme le jour de la Pentecôte était venu, ils étaient tous ensemble dans un même lieu. Et il se fit tout à coup un son du ciel, comme [est le son] d'un vent qui souffle avec véhémence, et il remplit toute la maison où ils étaient assis. Et il leur apparut des langues divisées comme de feu, qui se posèrent sur chacun d'eux. Et ils furent tous remplis du Saint-Esprit, et commencèrent à parler des langues étrangères selon que l'Esprit les faisait parler.

Or il y avait à Jérusalem des Juifs qui y séjournaient, hommes dévots, de toute nation qui est sous le ciel. Et ce bruit ayant été fait, une multitude vint ensemble, qui fut tout émue de ce que chacun les entendait parler en sa propre langue. Ils en étaient donc tout surpris, et s'en étonnaient, disant l'un à l'autre : voici, tous ceux-ci qui

parlent ne sont-ils pas Galiléens? Comment donc chacun de nous les entendons-nous parler la propre langue du pays où nous sommes nés? Parthes, Mèdes, Elamites, et nous qui habitons, [les uns] dans la Mésopotamie, [les autres] en Judée, et en Cappadoce, au pays du Pont, et en Asie, En Phrygie, en Pamphylie, en Egypte, et dans ces quartiers de la Libye qui est près de Cyrène, et nous qui demeurons à Rome? Tant Juifs que Prosélytes; Crétois, et Arabes, nous les entendons parler chacun en notre langue, des merveilles de Dieu. Ils étaient donc tout étonnés, et ils ne savaient que penser, disant l'un à l'autre : que veut dire ceci? Mais les autres se moquant disaient : c'est qu'ils sont pleins de vin doux.

Mais Pierre se présentant avec les onze, éleva sa voix, et leur dit : hommes Juifs! [et vous] tous qui habitez à Jérusalem, apprenez ceci, et faites attention à mes paroles. Car ceux-ci ne sont point ivres, comme vous pensez, vu que c'est la troisième heure du jour. Mais c'est ici ce qui a été dit par le Prophète Joël :

Et il arrivera aux derniers jours, dit Dieu, que je répandrai de mon Esprit sur toute chair; et vos fils et vos filles prophétiseront, et vos jeunes gens verront des visions, et vos Anciens songeront des songes.

Et même en ces jours-là je répandrai de mon Esprit sur mes serviteurs et sur mes servantes, et ils prophétiseront.

Et je ferai des choses merveilleuses dans le ciel en haut, et des prodiges sur la terre en bas, du sang, et du feu, et une vapeur de fumée.

Le soleil sera changé en ténèbres, et la lune en sang, avant que ce grand et notable jour du Seigneur vienne.

Mais il arrivera que quiconque invoquera le Nom du Seigneur sera sauvé.

JEAN 14.25-31

Je vous ai dit ces choses demeurant avec vous. Mais le Consolateur, qui est le Saint-Esprit, que le Père enverra en mon Nom, vous enseignera toutes choses, et il vous rappellera le souvenir de toutes les choses que je vous ai dites.

Je vous laisse la paix, je vous donne ma paix; je ne vous la donne point comme le monde la donne; que votre cœur ne soit point agité ni craintif. Vous avez entendu que je vous ai dit : je m'en vais, et je reviens à vous; si vous m'aimiez, vous seriez certes joyeux de ce que

j'ai dit : je m'en vais au Père : car le Père est plus grand que moi. Et maintenant je vous l'ai dit avant que cela soit arrivé, afin que quand il sera arrivé, vous croyiez. Je ne parlerai plus guère avec vous; car le Prince de ce monde vient; mais il n'a aucun empire sur moi. Mais afin que le monde connaisse que j'aime le Père, et que je fais ce que le Père m'a ՀՈԳԵԳԱԼՍԵԱՆ ՏՕՆ



Հոգեւոր Հովիւի Պատգամը

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. Ամէն

«Եւ բոլորը լեցուեցան Սուրբ Հոգիով ու սկսան խօսիլ ուրիշ լեզուներով, ինչպէս որ Սուրբ Հոգին անոնց խօսիլ տուած էր» (Գործք Առաք. 2:1-4):

Յարգելի հաւատացեալներ, այս Կիրակի Հոգեգալստեան Տօնն է:

Գործք Առաքելոցին 2-րդ գլուխին 1-4 համարներուն մէջ գեղեցիկ կերպով կը նկարագրուի Սուրբ Հոգւոյն էջքը Վերնատան մէջ առաքեալներուն վրայ:

Սուրբ Հոգւոյն գալուստը Վերնատան մէջ պարզապէս Առաքեալներուն մխիթարելը չէր միայն, այլ մասնատրաբար՝ անոնց աստուածային շնորհներ տալու, որպէսզի անոնց հոգին զօրանար, միտքը լուսաւորէր, սրտերը կազդուրէր, վախը փարատէր եւ հաւատքով շարունակէր մեր Տիրոջ վարդապետութիւնը տարածել աշխարհով մէկ:



Սիրելիներ, եթե այսօր մեր Եկեղեցին ցանկութիւն ունի աւելի կենսունակ, միասնական եւ միասիրտ դառնալու, ուրեմն, պիտի կարողանայ նաեւ՝ առանց հիմքը խախտելու նոր եւ ժամանակակից ձեւերով մտածել հաւատացեալներուն հաւատքը եւ սերը զօրացնելու մասին:

Հարաւային Հնդկաստանի եկեղեցոյ եպիսկոպոսներէն մէկը կը գրէ՝ «Եթէ պատասխան մը գտնենք այս հարցումին, թէ ո՞ր է եկեղեցին, նախ պէտք է հարցնենք՝ թէ «Ո՞ր է, որ Սուրբ Հոգին ներկայ է իր զօրութեամբ»:

Սիրելիներ, այսօր Ադօթքի Տուն եկողներուն մեծ մասը շատ քիչ ծանօթութիւն ունին մեր Եկեղեցոյ պատմութեան, անոր հոգեւոր առաքելութեան, դաւանանքին եւ Ամենասուրբ Երրորդութեան մասին: Ուրեմն, անոնք ինչպէ՞ս պիտի կարողանան դիմադրել արտաքին օտար կրօնական ազդեցութիւններու ճնշումին, եթէ իրենց ճշմարիտ հաւատքը չեն գիտեր:

Պատասխանը կրնանք գտնել Կ. Պոլսոյ Պատրիարք Շնորհք Արք. Գալուստեանի այս հրաշալի բացատրական խօսքերուն մէջ.

«Պէտք է համաձայնինք, որ եթէ մէկը կ'ուզէ նոր գիտելիքով մը լեցուիլ, նախ պէտք է դատարկուի: Յիսուս կ'ըսէ. «Երանի հոգիով աղքատներուն»: Մինչեւ որ մէկը չդատարկուի իրեն հպարտութենէն, անձնասիրութենէն, իշխելու մտադրութենէն եւ մարդկային միւս սովորական ցանկութիւններէն, Սուրբ Հոգին պիտի չլեցնէ անոր կեանքը: Մենք պիտի խաչուինք Քրիստոսին հետ, որպէսզի Յիսուս կազմաւորուի մեր մէջ...»:

Սուրբ Հոգւոյն մկրտութիւնը սիրոյ մկրտութիւնն է, որ Տէրը կը լեցնէ ամբողջ Եկեղեցիին վրայ: Քրիստոնէաները պարտաւոր են ցոյց տալ այդ սերը իրարու հանդէպ: Քրիստոսի սերը կը ներգործէ մեր սիրտերուն մէջ, որ ամենաբացայայտ նշանն է Սուրբ Հոգիին մեր մէջ բնակութեան...»:

Այս առթիւ կ'ուզեմ ձեզ հետաքրքրական դէպք մը պատմել.

«Օր մը Նիւ Եորքի Սուրբ Վարդան Մայր Տաճարին Առաջնորդ Սրբազան Հայրը՝ Թորգոմ Արք. Մանուկեան (այժմ հանգուցեալ) իր քարոզին մէջ քանի անգամ կը կրկնէ այս հարցը». «Ո՞ր է Հոգին, ո՞ր է Հոգին»:

Այդ պահուն տասը տարեկան երեխայ մը կը վազէ Սուրբ Սեղանին մօտ եւ ուղղակի դիմելով քարոզիչ Սրբազանին կ'ըսէ. «Հոս եմ, հոս եմ»: Անշուշտ այդ պահուն բոլորը կը զարմանան եւ

կը շփոթին: Փոքրիկը, որ իր մօր կողմէ միշտ կանչուած է «Հոգիս, հոգիս» փաղաքշական խօսքով, պահ մը կը մտածէ թէ Սրբազան Հայրը զինք կը կանչէ ու կը վազէ դէպի Սուրբ Սեղան»: Մաքուր սիրտով մանուկը այդ պահուն կը դառնայ Սուրբ Հոգւոյն շնորհներուն ՏԵՍԱՆԵԼԻ ներկայութիւնը Սուրբ Սեղանին առջեւ:

Ահաւասիկ, այսպէս հիմնուեցաւ Աստուծոյ Եկեղեցին, Եկեղեցի, որ կառուցուած է մարդկային հոգիներու աղիւսէն, շաղախուած սիրով ու եղբայրասիրութեամբ: Այն ո՛չ քարէն է, ո՛չ փայտէն եւ ո՛չ ալ ոսկիէն: Քրիստոսի Եկեղեցին հոգեկան տաճարն է: Նիւթական տաճարները կը հիննան, կը կործանին կամ թշնամին կ'աւերէ ու կը քանդէ, սակայն ոգեղէն տաճարները անմահ կը մնան:

Հոգւոյն հուրը չմարելու լաւագոյն միջոցը անոր տարածումն է, երբ համախմբուինք ու քով-քովի բերենք մեր ջահերը, հրդեհ ու բոց կ'ըլլայ, որ ոչ մէկ հակառակորդի ուժը չի կրնար մարել: Թշնամին քնացած չէ, ան հրեշտակի կերպարանքով կը մտնէ մեր մէջ, յուսահատեցնելու, մատնելու անհոգութեան, բաժնելու եւ քայքայելու ու մեզ դարձնելու անտարբեր մեր հոգեւոր ժառանգութիւններուն եւ սրբութիւններուն նկատմամբ:

Սոյն ճշմարիտ վկան հայ ժողովուրդի ու անոնցմէ անբաժան մեր Եկեղեցւոյ պատմութիւնն է: Թէեւ թշնամիները շատ անգամներ կործանեցին հայոց երկիրը, հողմացրիւ ըրին մեր ազգին գաւակները, փլատակներու ու պահեստներու վերածեցին մեր եկեղեցիները եւ մարեցին Սուրբ Լուսաւորիչի կանթեղը, սակայն չըկրցան մարել հայ հոգիին կանթեղը, հաւատքի ու յոյսի կրակը: Ինչո՞ւ, որովհետեւ փոքրիկ կայծ մը բաւական էր վերստին բորբոքելու զայն:

Ինչպէս Յորդանան գետին մէջ Յիսուսի Սուրբ Մկրտութեան ժամանակ Սուրբ Հոգին աղանիի կերպարանքով իջաւ Անոր վրայ, Վերնատունին մէջ հրեղէն լեզուներու կերպարանքով լուսաւորեց, իմաստութեամբ լեցուց եւ զանազան շնորհներով օժտեց առաքելներուն, այսօր եւս իմ աղօթքս կը բարձրացնեմ առ Աստուած, որ Սուրբ Հոգւոյն զօրութիւնը մուտք գործէ իւրաքանչիւր հայու ընտանիքէն ներս, այնտեղ հաստատէ սեր, միութիւն եւ խաղաղութիւն: Ու այս սիրով շաղախուած մեր ժողովուրդին բոլոր գաւակները ի Հայաստան, յԱրցախ, ի Սփիւռս աշխարհի, Աստուծոյ կամօքին համաձայն՝ ապրին երջանիկ, համերաշխ ու սիրով կեանք մը: Ամէն:

Օրհնութեամբ՝
Տ. Դավիթ Քհնյ. Մարգարեան

Au nom du Père et du Fils et du Saint-Esprit. Amen!

"Et tous furent remplis du Saint-Esprit et commencèrent à parler avec d'autres langues, comme le Saint-Esprit leur avait parlé" (Actes 2: 1-4).


Chers croyants,

Ce dimanche est la fête de la Pentecôte. Acte 1:1-4 d'Actes 2 décrit la page du Saint-Esprit sur les apôtres dans la chambre haute. La venue du Saint-Esprit dans la Chambre haute

n'était pas seulement pour reconforter les apôtres, mais aussi pour leur donner des grâces divines, afin que leurs âmes soient renforcées, leurs esprits éclairés, leurs cœurs guéris, leurs craintes dissipées et leur foi en la doctrine du Seigneur.

Bien-aimés, si aujourd'hui notre Église veut devenir plus vivante et plus unie, alors il pourra également penser d'une manière nouvelle et opportune au renforcement de la foi et de l'amour des croyants sans briser les fondations. L'un des évêques de l'Église du sud de l'Inde écrit: "Si nous voulons trouver une réponse à cette question de savoir où est l'église, nous devons d'abord nous demander:" Où est le Saint-Esprit présent en sa puissance?

" Bien-aimés, la plupart de ceux qui viennent aujourd'hui à la Maison de Prière connaissent très peu l'histoire de notre Église, sa mission spirituelle, sa croyance et sa Très Sainte Trinité. Comment pourront-ils alors résister à la pression des influences religieuses extérieures si elles ne connaissent pas leur vraie foi? Nous pouvons trouver la réponse dans ces merveilleuses paroles explicatives de Mgr. Shnorh, archevêque de Constantinople: « Nous devons convenir que si l'on veut être rempli de nouvelles connaissances, il faut d'abord être vidé. Jésus dit: "Heureux les pauvres d'esprit." A moins que l'on ne soit vidé de son orgueil, de son égoïsme, de sa maîtrise de soi, et d'autres désirs humains ordinaires,



le Saint-Esprit ne remplira pas sa vie. Nous serons crucifiés avec Christ afin que Jésus se forme en nous.

Le baptême du Saint-Esprit est le baptême d'amour qui remplit le Seigneur dans toute l'Église. Les chrétiens doivent montrer cet amour les uns pour les autres. L'amour du Christ affecte nos cœurs, qui sont le signe le plus évident de la présence du Saint-Esprit en nous. À cet égard, je voudrais vous raconter une histoire intéressante. "Un jour, le primat de la cathédrale-mère Saint-Vartan à New York, l'archevêque Torkom Manoogian (aujourd'hui décédé) a répété à plusieurs reprises cette question dans son sermon:" Où est l'Esprit, où est l'Esprit? «À ce moment-là, un garçon de dix ans court à la table sainte et s'adresse simplement au prédicateur, en disant:« Me voici, je suis ici. Bien sûr, tout le monde est surpris et confus à ce moment. Le petit garçon, qui est toujours appelé par sa mère avec les mots prudents "Mon âme, mon âme", pense un instant que le Saint-Père l'appelle et court à la Sainte Table. «Avec un cœur pur, l'enfant devient à ce moment la présence du Saint-Esprit.

C'est ainsi que fut fondée l'Église de Dieu, une Église construite à partir du sel des âmes humaines, mêlée d'amour et de fraternité. Elle n'est ni en pierre, ni en bois, ni en or. L'Église du Christ est un temple spirituel. Les temples matériels vieillissent, sont détruits ou l'ennemi les détruit, mais les temples spirituels restent immortels. La meilleure façon de prévenir les brûlures d'estomac est de les propager. Lorsque nous nous unissons et apportons nos lustres côte à côte, il y aura un feu et une flamme qu'aucune force ennemie ne pourra éteindre. L'ennemi n'est pas endormi, il entre en nous sous la forme d'un ange, décourageant, trahissant l'insouciance, nous divisant et nous détruisant et nous rendant indifférents à notre héritage spirituel et à notre sainteté.

Ce véritable témoignage est l'histoire du peuple arménien et de son Église, inséparable d'eux. Bien que les ennemis aient détruit la terre arménienne à plusieurs reprises, fait exploser les terres de notre nation, transformé nos églises en ruines et entrepôts, et éteint la bougie de Saint Lusavorich, mais ils ne pouvaient pas éteindre la bougie de l'âme arménienne, le feu de foi et espérance. Pourquoi? Parce qu'une petite étincelle était suffisante pour l'allumer à nouveau. Tout comme le Saint-Esprit est descendu sur lui sous la forme d'une colombe pendant

le saint baptême de Jésus dans le Jourdain, illuminé à l'image des langues de feu dans la chambre haute, rempli de sagesse et doté de divers dons aux apôtres.

Aujourd'hui, j'offre ma prière à Dieu pour que le Saint-Esprit puisse entrer dans le cœur de la famille arménienne et instaurer l'amour, l'unité et la paix. Et tous les enfants de notre peuple, mêlés à cet amour, vivent une vie heureuse, unie et aimante en Arménie, en Artsakh, dans la Diaspora, selon la volonté de Dieu. Amen

Avec mes bénédictions
Révérend Père. David Margaryan

Հարցեր Քահանային

Արդեօ՞ք օրհնուած խունկը կարելի է ամեն օր տան մէջ վառել:

Խունկը կը խորհրդանշէ հաւատացեալներուն աղօթքը, քանզի ըստ Աստուածաշունչին՝ «Եւ հրեշտակի ձեռքերէն խունկին ծուխը ինչպէս աղօթք սուրբերուն, ելաւ Աստուծոյ առջեւ» (Յայտն. 8:4): Փաստօրէն, հաւատացեալներու աղօթքը խունկի բուրմունքին պէս կը բարձրանայ դէպի վեր: Եթէ մարդիկ կ'աղօթեն եւ կը ցանկան աղօթքի ժամանակ խունկ վառել, ապա կրնան ընել ցանկացած ժամանակ:





ԿԱՐԵՒՈՐ ԽՈՐՀՈՒՐԴՆԵՐ

Արդեօք Գիտեի՞ք թե.-

- **Ի՞նչ կ'ըսէ՝ Ս. Պօղոս առաքեալը անարժանօրէն հաղորդուելու մասին:**

Քրիստոսի սիրոյ վարդապետութեան մունետիկ Ս. Պօղոս առաքեալը շատ յստակ կը զգուշացնէ մեզի: «Ով ուտէ այս հացը կամ խմէ Տիրոջ այս բաժակը անարժանօրէն, պարտական պիտի ըլլայ Տիրոջ Մարմնին եւ Արեան: Թող մարդ նախ ինքն իրեն փորձէ եւ ապա ուտէ այդ հացէն ու խմէ այդ բաժակէն. որովհետեւ, ով կ'ուտէ եւ կը խմէ անարժանօրէն, իր իսկ դատապարտութիւնն է որ կ'ուտէ եւ կը խմէ, քանի որ չի գատորոշէր Տիրոջ Մարմինը: Անոր համար իսկ ձեր մէջ բազմաթիւ հիւանդներ եւ ցաւագարներ կան, եւ շատերն ալ մեռած են, որովհետեւ եթէ մենք մեզ քննենք, ապա չէինք դատապարտուեր: Իսկ եթէ կը դատուինք, ապա Տիրոջմէն կը խրատուինք, որպէսզի աշխարհին հետ չդատապարտուինք» (Ա Կորնթ. 11.27-32): Ինչպէս կը տեսնենք, Ս. Պօղոս առաքեալը կը յորդորէ Ս. Հաղորդութեան մերձենալ միայն ինքնաքննութենէն յետոյ:

- **Արդեօք կարելի է քահանայէն Ս. Հաղորդութիւն վերցնել եւ տուն տանիլ:**

Ոչ մէկ պարագային: Ս. Հաղորդութիւնը սրբութիւն է՝ մեր Տիրոջ ճշմարիտ Մարմնին ու Արիւնը, որուն կրնայ դաչիլ միայն քահանայական ձեռնադրութիւն եւ օծում ունեցող հոգեւորականը: Նոյնիսկ եկեղեցւոյ անելի խոնարհ աստիճանի սպասաւորները՝ դպիրէն մինչեւ սարկաւազ, իրաւունք չունին Ս. Հաղորդութիւնը ձեռքով վերցնել կամ ուրիշին տալ:



ՇԱԲԹՈՒԱՆ ԱՐՕԹՔԸ

ԱՐՕԹՔ ԱՄԵՆՈՒՆ ՀԱՄԱՐ

Պարգեւատու բարիքներու,
եւ խաղաղութեան աղբիւր,
Տէ՛ր, մեր Աստուած.

սատանայական բոլոր խռովութիւններէն
խաղաղացո՛ւր մեր միտքն ու խորհուրդները,
թէ՛ այս գիշեր եւ թէ՛ ամէն ժամանակ:

Որպէսզի անցաւոր այս կեանքին մէջ քեզմով առաջնորդուինք,
ու հասնինք յաւիտեանական երկինքի թագաւորութեանդ,
որ աշխարհի սկիզբէն իսկ
պատրաստեցիր քու սուրբերուդ համար.
Եւ անոնց հետ միասին շնորհակալութիւն յայտնելով
փառաւորենք քեզ՝ Հայր եւ Որդի եւ Սուրբ Հոգի.
այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից.
Ամէն:

PRIÈRE POUR TOUS

Dispensateur de bienfaits,
et source de paix,
Seigneur notre Dieu,

apaise nos esprits et nos pensées des troubles de Satan,
pour cette nuit et à tout instant;

afin que, sous ta conduite dans ce monde temporel,
nous parvenions à ton royaume céleste éternel que tu as
préparé depuis le début du monde pour tes saints;
et en te rendant grâces avec eux,
nous te glorifierons avec le Père,
le Fils et le Saint Esprit, maintenant et pour l'éternité de
l'éternité. Amen.



ԲԱՅԱՆԱԼ

Անգամ մը ես ինձի մտածեցի, թէ որքան դժուար է բահանայ ըլլալ:
 Եթէ անոր կապան կարկատած է, կ'ըսեն, որ ան փնթի է: Եթէ տոր ու գեղեցիկ է, կը
 մտածեն՝ թէ ո՞ր գումարով գնած է:
 Եթէ բահանան բարետես է, կ'ըսեն թէ՛ կը կորչի: Եթէ տգեղ է, կ'ըսեն թէ՛ արդէն նման
 «կոկորդիլոսներուն» կը ձեռնադրե՛ն:
 Եթէ երկար կը բարոզէ, կ'ըսեն թէ՛ տանջեց մեզի: Եթէ կարճ է՝ պատրաստուած չէ:
 Եթէ երիտասարդ է, կ'ըսեն թէ՛ շատ երիտասարդ է, փորձառու չէ, մեղքը «պոչով կ'ընէ» ու
 անոր մեջքին վրայ կը շրջի: Եթէ ծեր է, ապա ի հարկէ՝ սուրբ է, բանի որ ծեր է: Մեղքերը
 իրենք իրենց անկէ փախած են:
 Դժուար է բահանայ ըլլալ, եւ այդ պատճառով ալ բահանան երբեմն մեջքով կը շրջուի
 մարդոց, որպէսզի չտեսնեն, թէ ինչպէս կ'արտասուի, երբ իր ձեռքերուն մէջ վեր կը
 բարձրացնէ ծածկած Քրիստոսը:

Յայր Միխայիլ Վալաամացի (Պիտկեվիչ)

LE PRÊTRE

J'ai pensé une fois à quel point c'est difficile d'être prêtre.
 Si sa soutane est rapiécée (raccornée), on dit qu'il est négligé. Si c'est nouveau
 et beau, on pense où a pris-t-il d'argent pour l'acheter?
 Si le prêtre est sympathique, ils disent qu'il sera perdu.
 Si c'est le contraire, on dira depuis quand on ordonne de tels "crocodiles"?
 Si le sermon est long, ils disent que c'est une torture. Court - pas préparé.
 S'il est jeune, ils disent qu'il est très jeune, aucune d'expérience, il "péchera" avec
 sa queue et lui tournera le dos. S'il est vieux, alors bien sûr, il est saint, parce qu'il
 est vieux. Les péchés eux-mêmes lui ont échappé.
 Il est difficile d'être prêtre, et c'est pourquoi le prêtre tourne parfois le dos aux gens
 pour qu'ils ne voient pas comment il pleure au cachet, quand il soulève le Christ
 dans ses mains.

Père Michael de Valaame (Piktevich)

THE PRIEST

I once thought about how difficult it is to be a priest.
 If his frock is patched (mended), it is said to be unkempt. If it's new and beautiful,
 they think, how much did he buy it for?
 If the priest is sympathetic, they say he will be lost. If he is ugly,
 they say they are already ordaining such "crocodiles".
 If the sermon is long, they say it is torture. Short - not prepared.
 If he is young, they say he is very young, inexperienced,
 he will "sin" with his tail and turn his back on him.
 If he is old, then of course he is holy, because he is old.
 The sins themselves have escaped him.
 It is difficult to be a priest, and that is why the priest sometimes turns his back on people
 so that they do not see how he cries, when he raises the hidden Christ in his hands.

Father Michael de Valaame (Piktevich)

ԵՂԻԱԿԱՆ ՊԱՅՔ

Հայ Եկեղեցւոյ կողմէ սահմանուած չորս եղանակի պահքերէն ամառնամուտի շաբաթապահքն է: Այս շաբաթապահքը, ինչպէս միւս եղանակի պահքերը, եկեղեցական որեւէ տօնի պատրաստութիւն չէ, իսկ աւանդաբար կը կոչուի Եղիական միայն այն պատճառով, որ կը նախորդէ շաբաթապահքի յաջորդ Կիրակին հանդիպող Եղիա մարգարէի յիշատակութեան տօնին:

Ամառոյ այս պահքը կը սկսի Հոգեգալստեան Կիրակիին յաջորդ օրը (պահքի բարեկենդանը՝ Հոգեգալստեան Կիրակի): Զատիկի օրուան փոփոխման հետ պահքի սկիզբը կրնայ փոփոխուիլ Մայիսի 11-էն մինչեւ Յունիսի 14-ը: Ինչպէս միւս եղանակներու պահքերը, այս պահքը եւս կը տեւէ 5 օր՝ Երկուշաբթիէն մինչեւ ուրբաթ:

Հայ Եկեղեցւոյ մէջ Հոգեգալստեան տօնը ունի 35 օրուայ շաբժականութիւն, ուստի կը կատարուի Մայիսի 10-էն Յունիսի 13-ը ձգուող ժամանակամիջոցին համապատասխանող Կիրակի օրը:

Սուրբ Հոգիի գալուստով Քրիստոսի եկեղեցին աւելի ընդարձակուեցաւ եւ ընդունուեցաւ աշխարհի եւ ազգերու կողմէ: Այս տօնով Հայ Եկեղեցւոյ մէջ կ'աւարտի Հինանց շրջանը:

PILGRIMAGE DAY SEVANAVANK (FEAST OF THE PENTECOST)

Since 2010, by the blessing of Karekin II Catholicos of all Armenians, the Feast of Pentecost was proclaimed as the pilgrimage day to the monastic complex of Sevanavank. On the Sunday of Pentecost, the holy relics of apostles are brought to Sevanavank from Echmiadzin and kept there the whole day, for the faithful to have the opportunity to receive the blessings radiating from them. The complex is located on Sevan Peninsula (used to be an island) in the north Province of Armenia. According to tradition, by the order of St. Gregory the Illuminator the church of Holy Resurrection and the chapel of St. John were founded here. The chapel of St John was built in honour of king Tirdat, as his baptismal name of was John. In 874, based on the vision of Archimandrite Mashtots Yeghivardetsi (later Catholicos of All Armenians) and with the support of Mariam Syouni, the daughter of Ashot A. Bagratuni and the widow of noble Vasak Gabourn Syouni, the

churches of Holy Apostles and St. Mary were built. In old times, three pilgrimages to Sevanavank were considered equal to going on a pilgrimage to Jerusalem. Sevanavank was also famous by its holy relics..

Holidays

Sunday - May 31, 2020

Feast of Pentecost

The Feast of Pentecost is the commemoration of the descent of the Holy Spirit upon the Apostles on the fiftieth day following the Feast of the Glorious Resurrection of Our Lord Jesus Christ. The Armenian Church celebrates this feast 50 days following Easter Sunday.

The Holy Spirit is one of the three persons in the Holy Trinity coexisting with, and equal to, the Holy Father and the Holy Son. During His earthly life and ministry Christ spoke to the Apostles about the coming of the Holy Spirit. Recording the words of Christ, St. John writes, “The Comforter, the Holy Spirit, whom the Father will send in my name, will teach you everything and make you remember all that I have told you.” (John 14:26).

The descent of the Holy Spirit is described in the Acts of the Apostles: “When the day of the Pentecost came, all the believers were gathered together in one place. Suddenly there was a noise from the sky which sounded like a strong wind blowing, and it filled the whole house where they were sitting. Then they saw what looked like tongues of fire which spread out and touched each person there. They were all filled with the Holy Spirit and began to talk in other languages, as the Spirit enabled them to speak. (Acts 2:1-4).

In the book of Acts, St. Luke further records the names of various countries, and that men from those countries were surprised, when each of them heard his native language. Among the mentioned places are Mesopotamia, Judea and Cappadocia (Acts 2:9). Two of the saints of the Universal Church, both of Roman origin, Tertullian and Augustine, have written that the word “Armenia” should possibly be substituted instead of “Judea”, as it is more logical that Armenia would be mentioned among those as a “foreign” country, as the apostles were living in Judea.

Moreover, with regards to geographical position, Armenia was situated between Mesopotamia and Cappadocia. Therefore, the people living in Armenia may have been among the first witnesses of the gifts of the Holy Spirit.

Among the Armenian Church songs and hymns, two are dedicated to the Feast of Pentecost: “The Sent Dove” (referring to the Holy Spirit in the form of a dove that descended upon Christ during His Baptism) and “Indivisible Trinity”. These are sung during the Morning Service on the feast day. Also,

during the Evening Service, the “Andastan” rite of the blessing of the four corners of the world is conducted. It is during this service that a prayer written by 12th century Armenian Church father Nerses of Lambron, is read.

In the Christian Church the teaching of divine grace is related to the Holy Spirit. According to that instruction, each virtue is a divine grace granted to the faithful by the Holy Spirit. Thus, ascribing any virtue to one’s own self, and not to God, is a grave sin and can be manifested in another, which is pride. Hence, commemoration of Pentecost is also an appeal to the faithful to avoid pride and instead, use the divine graces in life for righteous purposes and moral goals.

One of the four season fasting periods defined by the Armenian Apostolic Church is the fasting period preceding the beginning of summer. This fasting period, as well as the other ones preceding the other seasons of the year, is not preparation for any feast, and according to the tradition is called Elijah’s fast, as coincides the feast of commemoration the Prophet Elijah the next Sunday.

This fasting period preceding the beginning of summer starts the day following the feast of Pentecost (the flesh day preceding the fast is the Sunday, when the feast of Pentecost is celebrated). With the change of the Easter Feast day the beginning of the fasting period may be during the period May 11-June 14. Like the other fasting periods preceding the other seasons of the year, this one also lasts five days - from Monday till Friday.

2020-06-07

Commemoration of the Prophet Elijah

Prophet Elijah is one of the major prophets of the Old Testament, distinguished for his loyalty to the Lord, for his zealous struggle against idolatry spread in Israel by the apostate king Ahab and his idolatrous wife, Queen Jezebel.

Prophet Elijah lived in the IX century B.C. In the First Book of Kings (17-18) and the Second Book of Kings (1-2) is told about the activity of the Prophet Elijah. Evangelists also mention the name of the Prophet Elijah.

In the First Book of Kings it is told that being the true herald of the Word of God Elijah, by the Lord’s will appeared before the apostate king Ahab and warned about the upcoming drought. His prophecy came true and after three years the Prophet again went to the king Ahab. Proving the weakness of the idolatrous, Prophet Elijah prayed God asking to send down fire for the sacrifice and a heavy rain. It is also told that thanks to the divine grace the Prophet Elijah helped the widow in Zarephath making so that her bowl wouldn’t run out of flour and her jar wouldn’t run of oil, also restored the widow’s dead sun to life.

ՆՈՒԲԱՏՈՒՌԻՒՄԻՆ ԵԿԵՂԵՑԻՈՅ

**DON
À L'ÉGLISE**



**DONATION
FOR THE CHURCH**

Saint Gregory the Illuminator Armenian Cathedral of Montreal, QC
Donations of May have been received with great appreciation 2020
CHURCH:

IN LIEU OF FLOWERS DONATIONS MADE: THE LATE SARKIS GURNAGUL:

Mrs. Anahid Gurnagul \$300, Mrs. Siruhi Gurnagul, Mr. & Mrs. Norayr Gurnagul \$150, Mr. Stewart Myers, Mr. & Mrs. Toros & Ayda Keskinbicak, Mr. & Mrs. Gilbert & Reena Migirditsian \$100, Mr. Toros Kilavuz, Mr. & Mrs. Robert Kilavuz, Mr. & Mrs. Hagop & Anoosh Kazan \$50.

THE LATE SIRARPI DINGOYAN-KAZAN:

Mr. & Mrs. Krikor & Seta Kocar \$130, Mrs. Syla Ferah \$25.

THE LATE GARBIS FERAH:

Mrs. Anita Boyadjian \$100, Mr. & Mrs. Antranik & Armine Sirinyan, Mr. & Mrs. Arakel & Alice Arakelian, Mr. Levon Simonyan \$50.

HOKEHANKISD (REQUIEM SERVICES) IN MEMORY OF:

THE LATE DN. ARTO KEPEKCI:

Mrs. Hilda Kepekci & Family \$300,
Mr. & Mrs. Murat & Zivart Takvorian \$50.

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՏՕՆԱՑՈՅՑ ՅԱՌԱԶԻԿԱՅ ՇԱԲԱՌԻՆ Յունիս- Juin

- 1, Երկուշաբթի – Պահք – բ օր Հոգեգալստեան
Lundi 1 – Jeûne - 2ème jour de la Pentecôte
- 2, Երեքշաբթի – Պահք– գ օր Հոգեգալստեան
Mardi 2 – Jeûne - 3ème jour de la Pentecôte
- 3, Չորեքշաբթի – Պահք–դ օր Հոգեգալստեան
Mercredi 3 – Jeûne - 4ème jour de la Pentecôte
- 4, Հինգշաբթի – Պահք– ե օր Հոգեգալստեան
Jeudi 4 – Jeûne - 5ème jour de la Pentecôte
- 5, Ուրբաթ – Պահք– զ օր Հոգեգալստեան
Vendredi 5 – Jeûne - 6ème jour de la Pentecôte
- 6, Շաբաթ– Է օր Հոգեգալստեան
Samedi 6 - 7ème jour de la Pentecôte

ՀՈԳԵՀԱՆԳՍԵԱՆ ԿԱՐԳ

SERVICE POUR LE
REPOS DE L'ÂME



SERVICE FOR THE
REPOSE OF SOUL

ԿԻՐԱԿԻ, 31 Մայիս 2020



Տիկ. Հիլտա Քեփեքճիի եւ զաւակներուն,
Խնդրանքով հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի
իրենց սիրեցեալ ամուսնոյն, հօր եւ մեծ հօր՝

ԱՐԹՕ Ա. ՍՐԿ. ՔԷՓԷՔՃԻԻ

(DN. ARTO KEPEKCI)

Մահուան 6-րդ տարելիցին առիթով:

Ինչպէս նաեւ՝

ԱԶՆԻՒ ՊԻՒՐԿԻՒԼԻ

(AZNIV BURGUL)

Մահուան 15-րդ տարելիցին առիթով:

ԵՒ

ՔԷՓԷՔՃԻ, ՊԻՒՐԿԻՒԼ, ԳԱՍՊԱՐԵԱՆ

ԵՒ ԳԱԼՏԱՅԵԱՆ

Գերդաստաններու համայն ննջեցելոց
հոգիներուն ի հանգիստ:



ՇԱԲԹՈՒԱՅ ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆՆԵՐ

Կարելորը իմաստութիւնն է. իմաստութիւն ձեռք բեր եւ ամէն գնով փորձէ զարգացնել միտքդ:

Սողոմոն Իմաստուն

Զարութիւնը դիտաւորութենէն սնուելով սիրտը կը զայրացնէ, իսկ յոյսով ու աղօթքով ջախջախելով՝ կը վերանայ այդ:

Ոչ մէկը չի կրնար Քրիստոսին ունենալ առանց ջանքի, քրտինքի, խոնարհութեան եւ անդադար աղօթքի:

Հայր Մարկոս

Աղօթէ՛ Աստուծոյ կարծես թէ կը տեսնես անոր, քանզի ան իսկապէս կը տեսնէ քեզ:

Հայր Նեստոր

Անփութօրէն ու ծուլութեամբ կատարուած աղօթքը դատարկախօսութիւն է:

Ինչպէս ուժեղ քամին կը ցրէ փոշին, այդպէս ալ Աստուծոյ փառաբանելով եւ աղօթքով կը հալածուի մեր թշնամին՝ սատանան:

Եփրեմ Ասորի

Wisdom Thoughts of the Week

The important thing is wisdom. Acquire wisdom and try to develop your mind at all costs.

Soghomon the Wisdom

The evil that has intentionally nourished annoying the heart, but with hope and prayer destroys and disappears that.

No one can have Christ without effort, sweat, humility, and unceasing prayer.

Father Margos

Pray as if you seem to see God in him because he really sees you.

Father Nedor

Praying carelessly and lazily is empty talk.

Just as the strong wind scatters the dust, so our God, Satan, is persecuted by praising God and praying.

Ephraim Assyrian

Ս. Գրիգոր Լուսավորիչ Առաջնորդանիստ Մայր Տաճար
St. Gregory the Illuminator Armenian Cathedral of Montreal
Ս. ԵՒ ԱՆՄԱՀ ՊԱՏԱՐԱԳ ԵՒ ՀՈԳԵՀԱՆԳԻՍ
LA SAINTE MESS ET L'OFFICE DE REQUIEME
Կիրակի, 31 Մայիս 2020
Dimanche, le 31 Mai 2020

Ուղիղ հեռարձակում - Live



Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal



Ս. Պատարագ առաւօտեան ժամը 10:30-ին

La Sainte Messe à 10:30

Հոգեհանգստեան Պաշտօն կէսօրին /Office de Requieme à Midi

Թէեւ ներկայ իրավիճակը անորոշութեամբ կը շարունակուի, սակայն մեր Եկեղեցւոյ Ս. Եւ Անմահ Պատարագը, հոգեհանգստեան պաշտօններն ու աղօթքները առցանց կերպով կը շարունակուին մատուցուի:

Անոնք, որոնք կը փափաքին դիմել հոգեհանգստեան պաշտօններու, աղօթքի խնդրանքներու իրենց հարազատներու ապաքինման համար, կրնան հեռաձայնել Եկեղեցւոյ գրասենեակ՝ (514)279-3066 թիւին, մենք սիրով կ'ընդառաջենք Ձեր խնդրանքներուն միաժամանակ հաղորդակից դարձնելով Ձեզի Մեր սրբազան արարողութիւններուն:

Bien que la situation actuelle reste incertaine, la liturgie de la Sainte et Immortelle, les services de requiem et les prières continuent d'être offerts en ligne. Ceux qui souhaitent demander un service de requiem et des prières pour le rétablissement de leurs proches, veuillez appeler le Bureau de l'Église au (514)279-3066, nous serons heureux de répondre à vos demandes et de vous faire participer à nos rites sacrés.

Nous acceptons également vos dons en ligne par:





Ս. Գրիգոր Լուսաւորիչ Առաջնորդանիստ Մայր
Տաճար
St. Gregory the Illuminator Armenian Cathedral of Montreal

Երեկոյեան Ժամերգութիւն եւ
Բժշկութեան Աղօթք - Առցանց
SERVICE DU SOIR ET PRIÈRE DE GUÉRISON
Diffusion en direct



Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal



Երեկոյեան Ժամերգութիւն եւ
Բժշկութեան Աղօթք
Մայիս եւ Յունիս ամիսներուն համար
Ամեն Չորեքշաբթի երեկոյեան ժամը՝ 5:00-ին:
«Ամեն ինչ որ կը խնդրէք աղօթքի մեջ՝ հաւատքով,
պիտի ստանաք» (Մտ. 21:22):

SERVICE DU SOIR ET
PRIÈRE DE GUÉRISON
AUX MOIS DE MAI ET JUIN

Veillez-vous joindre par la page de Facebook.
Tous les mercredis soir à 17h:00

«Tout ce que vous demanderez dans la prière avec foi,
vous le recevrez» (Mathieu 21:22).

615 Stuart Avenue, Outremont, QC H2V 3H2 / Tel.: (514) 279-3066/ Fax: (514)279-8008
stgregorychurch@gmail.com

Facebook: Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal



**Ս. Գրիգոր Լուսավորիչ Առաջնորդանիստ
Մայր Տաճար**
**St. Gregory the Illuminator Armenian Cathedral
of Montreal**

ՍՈՒՐԲ ԳԻՐՔԻ ՍԵՐՏՈՂՈՒԹԻՒՆ
Ուղիղ հեռարձակում



Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal



**Ս. Գիրքի Սերտողութիւն Առցանց
Մայիս եւ Յունիս ամիսներուն**

Արժ. Տ. Դաւիթ Քիւյ. Մարգարեանին հետ
ամէն Յինգզաբթի երեկոյեան ժամը` 5-ին:

Կը հրաւիրենք մեր սիրելի հաւատացեալները
աղօթակից դառնալու եւ հաղորդուելու
փոխանցուելիք աստուածաշնչական գիտելիքներուն:

Սերտողութիւններուն հետեւիլ
Եկեղեցւոյ դիմատետրին միջոցաւ:

615 Stuart Avenue, Outremont, QC H2V 3H2 / Tel.: (514) 279-3066/ Fax: (514)279-8008/
stgregorychurch@gmail.com

Facebook: Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal



**Cathédrale Arménienne Saint-Grégoire
l'Illuminateur de Montréal**
Études Bibliques
Diffusion en direct



Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal



Études Bibliques
Aux mois de Mai et Juin

Rév. Père David Margaryan, Prêtre Paroissial
Tous les jeudis à 17h:00

Nous invitons nos chers fideles
à prier et à communiquer
avec les connaissances bibliques.

Veillez suivre les programmes à travers la page
Facebook de l'Église.

615 Avenue Stuart, Outremont, Québec H2V 3H2 / Tél.: (514) 279-3066/
Fax: (514)279-8008/ stgregorychurch@gmail.com
Facebook: Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal